ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԷԼ-ՔՈՒՎԵՅԹԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏԻՆ

Նոյեմբերի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էլ-Քուվեյթի նախանգապետ Շեյխ Ալի ալ-Ջաբեր ալ-Սաբահի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Քուվեյթի պետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆադեյ Չարչօղլյանի:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները վերընթաց զարգացում են ապրում եւ վստահություն հայտնեց, որ ձեւավորված համագործակցությունը բարի արդյունքներ պիտի արձանագրի երկու ժողովուրդների կյանքում: Ապա այցելության առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնեց Էլ-Քուվեյթի իշխանություններին՝ Քուվեյթում հաստատված հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նկատեց նաեւ, որ հինգ տասնամյակ առաջ տարածաշրջանի առաջին հայկական եկեղեցու կառուցումը Քուվեյթում լավագույն վկայությունն է երկրի իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ դրսեւորվող հարգանքի եւ գնահատանքի:

Էլ-Քուվեյթի նախանգապետն իր հերթին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համանախագահ ընտրվելու կապակցությամբ: Շեյխ Ալի ալ-Ջաբեր ալ-Սաբահը կարեւորեց երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդումը փոխադարձ այցելությունների միջոցով:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց միջկրոնական հարաբերություններին, ինչպես նաեւ համայն հայության հոգեւոր կենտրոն տարբեր իսլամ կրոնապետերի այցելություններին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված օրհնի եւ արգասաբեր դարձնի հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամական հարաբերությունները, իսկ Էլ-Քուվեյթը շարունակի իր առաջընթաց կյանքն ապրել խաղաղության մեջ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Բրունո Սկապինիին: Դեսպանը, որ ավարտեց իր դիվանագիտական առաքելությունը ՀՀ-ում, այցելել էր Ս. Էջմիածին՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Էլ-Քուվեյթի նահանգապետը Մայր Աթոռում

Իտալիայի դեսպանը Ս. Էջմիածնում